ՓԱՌԱՆԻՀԻՆԳՇԱԲԱԹ—ՏԱՐԻ—ԹԻՒ—1902—ՇԱԲԱԹ—6—ՆՈՅԵՄԲԵՐ Ն. Տ.—18—ՆՈՅԵՄԲԵՐ—1876

ԳԱՆՄԱՆԹ

Ցարեւանգին ամ. Պօլսոյ եւեր 8 մկ.
» Դաւառաց » 10 մկ.
Վեղամանայ ամ. Պօլսոյ » 4 մկ.
» Դաւառաց » 5 մկ.
ուրուքանչիւր թերթի գին 60 փարա։ Յանուագման տոզը մէկ անգամի համար 3 փարա։ երկու անգամի համար 2 փարա։ ա այլ անգամներու համար գնա ասկարկութիւն կայ։

ՄԱՄԻԱ

ԼՐԱԳԻՐ

ԳԱՆՄԱՆԹ

Դուրս գացած լրագրաց համար ուղարկուած ծախքը խմբագրութեան վրայ։

Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ որեւ իցէ գրութիւն խմբագիրը—Տնօրէնին պիտի ուղղուի Դպրատիա Սանտրքեղլար Ճառտէնի թիւ 198, Նորոհան, Մամիսի գրատունը։

Համարու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ 6 ՆՈՅԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վեհ. Սուլթանին ներկայանալու առթիւ Իգնաթիէֆ զօրավարին ըրած առենախօսութիւնն, և զինադադար պահանջելու համար Բ. Դրան տուած վերջնագիրն աչքերնուս առջեւ է։ Առաջնով կը ծանուցաներ թէ իւր Օգոստափառ տէրը՝ Ռուսիոյ կայսրը՝ պատմադիր է համաձայնութեան յարաբերութիւններ հաստատել երկու տէրութեանց մէջ, թէ Ռուսիա չկըրնար անտարբեր մնալ դրացի տէրութեան մը երկրին մէջ անցած անցքերուն, ուր իրեն կրօնակիցներէն բընակիչներ կան, և որ Սև ծովն ու Միջերկրականը միացնող առեւտրական ճանապարհը կը պարունակէ։ Զօրավարն ասով ակներեւ ակնարկութիւն կընէ քրիստոնէից՝ կամ աւելի ճիշդ խօսելով՝ Սլաւոյ վիճակին, որ այսչափ բանակոտեան առտեսեղած է։ Իսկ առեւտրական ճանապարհի խօսքով նեղուցները կ'ակնարկէ, որք Ռուսիոյ այնչափ ուշադրութիւնը դրաւած են։ Ռուսիոյ կայսրը կը փափաքի եղեր վարչական հաստատութեան, բարեկարգութեան և ապահովութեան, ինչպէս նաև այս երկրին ժողովրդոյ զարգացման։ Ուստի կայսեր բաղձանքն է Վեհ. Սուլթանին կառավարութեան հետ համաձայնութեամբ խաղաղութիւնը վերահաստատել, և վերջին ժամանակներս պատահած դժբաղդութեանց մէջն ընդհանրապէս առաջքն առնուլ։

* * *

Դժբաղդաբար՝ Ռուսիոյ դեսպանին այս խօսքերուն շուտով յաջորդեց իւր հոկտ. 19/31 թուով հռչակաւոր վերջնագիրն, որոյ մէջ 48 ժամ պայմանակէտ կուտար զինադադարն ընդունելու։ Այն գրուածին մէջ, որ դեսպանագիտութեան վայելուչ խընամքով գրուած չերեւիր, Ռուսիոյ դեսպանը կը յայտարարէ թէ իւր տէրութիւնն անտարբեր չէր կրնար մընալ Սերվիոյ ու Գարատաղի իշխանութեանց հետ Թուրքիոյ ունեցած պատերազմին։ Կայսրն իւր ժողովրդեան համակրութեանց մասնակցելով, ուրիշ մեծ տէրութեանց հետ համաձայնութեամբ աշխատեր է բարեկարգութիւնն ու հաշտութիւնը վերադարձնել։ Երաշխաւոր տէրութիւնք համաձայնած լինելով Սերվիոյ և Գարատաղի յառաջ քան զպատերազմն ունեցած վիճակը վերադարձնել, Ռուսիոյ դեսպանն Օսմանեան զօրաց զինուորական գործողութիւններն անօգուտ արիւնհեղութիւն կը համարի, և որպէս թէ կոտորածն այս վերջերս մարդկութեան զգացումները վիրաւորող կերպարանք մ'առած ըլլայն, Ռուսիոյ կայսրն ոչ ևս կրնայ եղեր ներել անոր, մանաւանդ զինադադարի բանակցութեանց յապաղման նը կատմամբ։ Այս պատճառաբանութեանց վրայ յենլով, Իգնաթիէֆ զօրավարը 48 ժամ կուտայ վեց շաբաթէն մինչև երկու ամիս առանց պայմանի զինադադար մը կնքելու, առանց որոյ՝ դեսպանատան բոլոր անդամոց հետ մեկնիլ կսպառնայ։ Զինադադարն ընդունուեցաւ, և Ռուսիոյ դեսպանը մեկնելու հարկին մէջ չգտնուեցաւ։ Հիմա, թէպէտ ապագայն յայտնի չէ, խաղաղութեան հաստատուելուն համար մեծ ջանք և հաւանականութիւնք կան։

* * *

Ինչպէս յայտնի է, զինադադարի միջոցին դեսպանախորհուրդ մը պիտի գումարի, որ պիտի ջանայ պատերազմող կողմանց մէջ հաշտութիւնը վերադարձնել, և ապստամբեալ դաւառները խաղաղեցնել։ Եւրոպական լրագրաց ոմանց խօսքին նայելով, Ռուսիա առաջարկեր է առաջին [illegible] առանց Թուրքիոյ կողմէն երեսփոխանի, հոն ծրագիր մը պատրաստել, և երկրորդ դեսպանախորհուրդի մը մէջ Բ. Դրան հաւանութեան ներկայացնել։ Բայց այս եղանակն ի բաց թողուեր է, և Անգղիոյ տէրութիւնն իւր վրայ առեր է դեսպանախորհրդին ծրագիրը պատրաստելու գործը։ Իսկ Ռուսիա՝ Անգղիոյ առաջարկութեանց հաւանելու տրամադրութիւն կը ցուցնէ։ Ծրագրին կէտերը տակաւին յայտնի չեն, բայց բաւական ժամանակէ 'ի վեր տէրութեանց նախարարներուն ճառերը, գրութիւններն և լրագրաց յօդուածները փոքր 'ի շատէ պարզած են զանոնք։ Դեռ այս օրերս ալ Անգղիոյ առաջին նախարար Լորտ Պիքոնսֆիլտ, ինչպէս արդէն հեռագիրն համառօտիւ ծանուցած էր, քաղաքապետական պալատին մէջ Անգղիոյ կառավարութեան գաղափարն և քաղաքականութիւնը լաւ ծրագրեց։ Անգղիոյ նպատակն է, ըսաւ, Եւրոպիոյ խաղաղութեան պահպանութիւնն, որոյ յաջողմանն ամենէն ապահով միջոցն է կնքեալ դաշնադրութեանց անբեկանելիութիւնը։ Փարիզի դաշնադրութիւնն, որոյ հիմն ու սկզբունքն է Թուրքիոյ անկախութիւնն ու ամբողջութիւնը, ոչ միայն ջնջուած չէ, այլ և 1871 ին Լոնտրայի դեսպանախորհրդին մէջ ալ վաւերացեալ է։ Անգղիա Պէրլինի յիշատակագրին հաւանութիւն չ'էր տուած, քանզի այն գրութիւնն անգործադրելի բարեկարգութիւններ կառաջարկէր, և այնպիսի միջոցներ կը պարունակէր, որոյ հետևանքը պիտի լինէր Թուրքիոյ գրաւումը՝ հակառակ դաշնադրութեանց և Թուրքիոյ անկախութեանն ու ամբողջութեան։

* * *

Անգղիոյ առաջարկութիւն մ'ալ եղաւ, այն է Աւստրիոյ կողմէն Հերսէքի ու Պոսնիոյ, և Ռուսիոյ կողմէն ալ Պուլղարիոյ դրաւումը, մինչդեռ դաշնակից տէրութեանց նաւատորմերը կ. Պոլիս պիտի երթային։ Բայց այս առաջարկն ալ դաշնադրութեանց հակառակ էր, ուստի Անգղիա զայն մերժեց, և մինչև ցարդ՝ պարագայից դժուարութեան հակառակ՝ Թուրքիոյ ամբողջութիւնն ու անկախութիւնը պահուեցաւ։ Անգղիա ուրիշ նպատակ մ'ալ ուներ, այն է ապագայ խաղաղութիւնը պահպանելու համար քրիստոնէից վիճակին բարւոքումն։ Առաջին զինադադար մը կնքուած էր, երբ Անգղիոյ մէջ Պուլղարիոյ սոսկալի դէպքերուն առթիւ ծագած յուզմունքը Սերվիացւոց և անոնց բարեկամաց կարծել տուաւ թէ Անգղիա՝ իւր աւանդական քաղաքականութիւնը թողլով՝ զիրենք կը բաջալերէ պատերազմը շարունակելու։ Լորտ Պիքոնսֆիլտ զինադադարն հաստատելէ յետոյ թէ Անգղիոյ ըրած դեսպանախորհրդի առաջարկին ամեն տէրութիւնք հաւանութիւն ցոյց տուած են։ Անգղիոյ երեսփոխան Սալիսպըրի մարքիզը կարելի եղած ջանքն 'ի գործ պիտի դնէ խաղաղութիւնը հաստատելու՝ ներկայ դաշնադրութեանց պահպանութեամբ, թէ և յայտնի է որ Թուրքիոյ ամբողջութիւնն ու անկախութիւնն այն ժամանակ միայն կը կրնան պահպանուիլ, երբոր Թուրքիոյ ժողովուրդք իրենց բարեկեցութեան խնամք տանող կառավարութեան մը ներքև դտնուին։ Լորտ Պիքոնսֆիլտ յարեց թէ կը յուսայ որ առանց պատերազմի կարելի պիտի լինի այս վախճանին հասնիլ։ Բայց եթէ պատերազմիլ հարկ ըլլայ, Անգղիա, որ արդէն իւր մեծ միջոցներով պատերազմի պատրաստ է, չպիտի դէնքը վար դնէ, մինչև որ արդարութիւնը կատարելապէս չապահովէ։ Ինչպէս այս խօսքերէն կը տեսնուի, Անգղիոյ ծրագիրը պիտի ըլլայ դաշնադրութեանց և Թուրքիոյ ամբողջութեան ու անկախութեան պահպանութիւնն։ Ապստամբեալ դաւառաց խօսքը չը՝ներ, այլ ընդհանուր Թուրքիոյ ժողովրդոց վիճակին բարւոքմանը փափաք ցուցնելով, ինքնօրինութեան գաղափարները լռելեայն կը մերժէ, և Սերվիոյ ու Գարատաղի նկատմամբ նախ քան զպատերազմն վիճակին վերադարձն ղդալ կուտայ։ Ասկէ դուրս Կորչաքոֆ իշխանին Պէրլինի յիշատակագրին պարունակածին նման անգործադրելի գաղափարները կը մերժէ։ Այս կերպի ահա անգղիական ծրագիրն, որուն Ռուսիա հաւանութիւն տալու տրամադրութիւն կը ցուցնէ, և հարկաւ ուրիշ տէրութիւններն ալ մերժող չպիտի գտնուի։

— —

Հեռագիրը Ռուսիոյ կառավարութեան բերան համարուած նօր լրագրին քանի մը խօսքերը բերեր էր, որով յիշեալ թերթը Ռուսիոյ կայսեր Մոսկուայի մէջ ըրած բանախօսութիւնը խաղաղութեան նպաստաւոր կը համարի եղեր։

Ահաւասիկ յիշեալ լրագրին խօսքերը։

"Ալէքսանդր Բ. կայսրը, դահն եղած օրէն 'ի վեր այս առաջին անգամն է որ ակնարկութիւն կընէ այնպիսի հաւանականութեանց, որք կը՝նան զինքը հարկադրել Ռուսիոյ սուրը կշռոյն նժարին մէջ նետելու։

"Իւր երէկուան խօսքերը տակաւին խաղաղութեան խօսքեր են. բայց կը ցուցնեն թէ ժամանակը կը՝նայ գալ ուր այդ վեհապետն ինքզինք հարկադրեալ տեսնէ զօրութիւն գործածելու 'ի նպաստ այնպիսի դատի մը, զոր նուիրական պարտականութիւնք, Ռուսիոյ ամենասիրելի քաղաքակրթութեան ամենաբարձր շահերն սակայնաբար կ'ապստրեն իրեն՝ իւր պաշտպանութեան ներքև առնուլ։"

Նօր հեռաւեալ կերպիւ կը վերջացնէ իւր յօդուածը.

"Կայսեր գործածած լեզուն պիտի համոզէ զԵւրոպա, թէ Ռուսիա խաղաղական և մարդասիրական գործ մը կատարել կուզէ. բայց միանգամայն հաստատութեամբ որոշած է՝ անգամ մ'ալ այս ձեռնարկութիւնը վտանգի մէջ չձգել տարտամ խոստումներով և գործադրութենէ զուրկ բարեհորոգմամբք։"

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 15 Նոյ.

Լորտ Նորթքոթ Լորտ Սալիսպըրիի քարտուղար անուանեցաւ Կ. Պոլսոյ դեսպանախորհրդին մէջ։

Թայմզ կը պնդէ որ դեսպանախորհուրդը նախ խաղաղութեան վերահաստատութիւնն որոշէ։

Բեռլրսպուրկ 15 Նոյ.

Արևմտեան և հարաւային սահմանագլուխներէն դուրս ձի տանելը պաշտօնական կերպիւ արգիլուեցաւ։

Վիէննա 15 Նոյ.

Կառավարութիւնը հաւանութիւն տուաւ դեսպանախորհրդին։

Բոսթայի ցուցիչն սպաննող Ֆըրանչէսքօնի կախուելու դատապարտեցաւ։

Լոնտրա 16 Նոյ.

Կլոպ լրագիրը կը ծանուցանէ թէ 21 վաշտ հեռեակ, 7 գունդ ձիաւոր և 80 դաշտային թնդանօթներ նշանակուեցան, հարկ եղած ժամանակ Արևելք դրկուելիք զօրաց առաջին բանակը կազմելու։

կը հաւատան թէ յառաջիկայ դեսպանախորհրդին մէջ Ռուսիա միակ պիտի մնայ, որովհեան միւս տէրութեանց ամենն ալ խաղաղութիւն կուզեն։

Վիէննա 15 Նոյ.

Աւստրիոյ կառավարութիւնը Դեսպանախորհրդին նկատմամբ Անդղիոյ առաջարկութեանց հաւանութիւն տուող պատասխանն երէկ ղրկեց։

Պուատա Բէշթա 15 Նոյ.

Երեսփոխանաց ժողովին մէջ Պ. Հէյֆի Հարցում ուղղեց կառավարութեան թէ արտաքին գործոց նախարարն ինչ գիրք պիտի բռնէ Ռուսիոյ կայսեր Մոսկուայի մէջ ըրած բանախօսութեան առթիւ։

Լոնտրա 16 Նոյ.

Պերլինէն Անդղիոյ լրագրաց մէջ հրատարակեալ հեռագիրք՝ Լեհաստանի մէջ ապստամբութիւն եղնելու երկիւղ կը յայտնեն։

Լոնտրա 16 Նոյ.

Լորտ Պիքոնֆիլտ Պիրմինկէմէն յանկարծ Լոնտրա կանչուեցաւ՝ Արեւելից վիճակին վրայ իւր պաշտօնակցաց հետ խորհրդակցելու։

Պուքրէշ 16 Նոյ.

Կառավարութիւնը դիւանագիտական թղթակցութիւնները պարունակող կանանչ տետրակը խորհրդարանին ներկայացուց։

Յետոյ ուղերձին վրայ վիճաբանութիւն եղաւ, որ իշխանին ատենախօսութեան կարեւոր մասերն յիշելով՝ զինեալ չեղոքութեան հարկաւորութիւնը կը հաստատէ և կառավարութեան ձեռք առած միջոցներուն հաւանութիւն կուտայ։

Լոնտրա 17 Նոյ.

Շամ	Քոնս.	10 11/16
փոխ	1865	12
»	1869	11 1/8
»	1871	—
»	1872	18
»	1873	11
Եգիպտ.		48
Անգղ	Քոնս.	95 1/4

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոլիկ աղօթքը բնակիչներէն մեկիսը կատարեց։

Կայսերական հրամանաւ՝

Թէհրանի Օսմանեան դեսպան Միւնիք էֆէնտիին Պարսից աստիճան արուեցաւ։

Ալի Սաթա էֆէնտի զատէ Դաւրի պէյ Անատոլուի գաղասկէր անուանեցաւ։

Էմին աղան Սիւրրէ էմինի անուանեցաւ 1294 տարւոյն համար։

Տարի էֆէնտի, Իւլէմա, Անատոլուի գաղասկերին Մուշավիր անուանեցաւ։

Պրինտիզիի Օսմանեան հիւպատոս Քարտճա էֆէնտին Թիֆլիզի Օսմանեան հիւպատոս անուանեցաւ սպանեալ Պ. Հճէթ էֆէնտիին տեղ։

Աւստրիոյ և Գերմանիոյ դեսպաններն հինգշաբթի օրը Բ. Դուռն երթալով, զատ զատ տեսակցեցան արտաքին գործոց նախարարին հետ։

Հինգշաբթի օրը Մեծ-Եպարքոսը նոր դնացեր էր Բ. Դուռը, կայսերական պալատէն կանչուեցաւ և մինչև իրիկուն Վեհ. Սուլթանին քով կեցաւ։

Լէվընթ Հերալտ կը ծանուցանէ թէ Ռումելի բնակեալ յոյն ժողովուրդք այս միջոցիս խնդրագիր մը կատարեր էին Պարիզ Պատրիարքարանին միջոցաւ Բ. Դրան մատուցանելու համար։ Յիշեալ խնդրագիրը կը յայտնէ թէ մինչև հիմա Օսմանեան կայսրութեան մէջ արտօնութիւններուն անխտրաբար ամեն հպատակ ժողովրդոց միանգամայն կը շնորհուէին, հետևաբար կը բողոքեն Օսմանեան հպատակ քրիստոնեայ ազգերէն մէկուն բացառապէս արտօնութիւն շնորհելու առաջարկութեան դէմ, և այս բացառութեան վտանգը ցոյց տալով յոյս կը յայտնեն թէ Բ. Դուռն ոչինչ չփոխեր այնպիսի առաջարկութեանց։

Զրոյց կայ թէ Բ. Դրան նախարարներէն մին գեսպան պիտի երթայ Բեղրսպուրգ Քաղաքի փաշային տեղ։

Պասիրէթ լրագրին խոփանեան պատճառ եղող յօդուածին հեղինակ Խայրի էֆէնտին իւր ծննդեան քաղաքն ազատուեցաւ։

Անդղիական լրագիրք կը ծանուցանեն թէ Պուլղարիոյ անդթութեանց վրայ Պ. Կլատսթոնի հրատարակած տետրակը 2700 Անդղիական լիրա շահ բերեր է իրեն, և թէ այս գեղեցիկ գումարէն Պ. Կլատսթըն 100 լիրա Պուլղարիոյ համար բացուած օգնութեան ոնտուկին նուիրեր է։

Անցեալ շաբթուան փոթորիկը Սև ծովու մէջ վեց ալ առագաստանաւ դամբք ձգեց, որոց չորսն Օսմանեան դրօշակ կը կրէին։

Երէյլիի մօտ դամբն լցնող Նիւմայիշ շոգենաւին վրայ վերջին եկած տեղեկութիւններէն կիմացուի, որ յիշեալ շոգենաւին մէջ 200 ուղևորք կան եղեր, և ասոնց կէսը ծովակուր եղեր են։

Բերայի ու Ղալաթիոյ մէջ այս օրերս գողութիւնք շատցած են։ Վերջին ութ աւուրց մէջ քանի մը տուներ ու վաճառանոցներ կողոպտուեցան։ Ասկէց զատ չարագործք այն աստիճանի հասուցած են յանդգնութիւնն, որ ցերեկ ժամանակ Բերայի և Ղալաթիոյ բազմամարդ չեղող փողոցներուն մէջ հանդարտապէս մտնելով կը կողոպտեն, ժամացոյց քսակ և այլն կորզելով։

ԼՈՍՏԱՆԴՈՒԿՅԼԻՈ
ԵՍԱՏԸ ՈՒՏՈՒՄԻՆ

5 Նոյ. ուրբաթ իրիկուն	12, 6
6 Նոյ. շաբաթ առաւօտ բացուեցաւ	12, 2
Ժամ 6 1/2ին	12, 3

Կ. Պոլիս 5 Նոյեմբեր.

Ֆոնտէ Թէնէրալի բաժին Անգլիոյ	2	8
« փոխանակու թիւն »		1, 25
Կ. Պոլսոյ Պանքային »		3,
Քրէտի ֆոնտիյէ »		2, 8
Քրէտի Օսմրօ—Թիւրք		—
Երկաթուղեաց	Ֆր.	33 1/2
Փոխ. 1863	»	62
» 1865	» »	62
» 1869	» »	56
» 1872	» »	19 1/2
» 1873	» »	55
Թրամուայ	Օսմ. լիր	1 5

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ
5 ՆՈՅԵՄԲԵՐ

Անգղ. լիրա	տուրքայ	110 30
Նապոլէոն ուկի	»	87 25
Իմբէրիալ Ռուս	»	88 20
Դէրտիկ	»	51 20
Հինգ Ֆրանք	»	—
Հինգնոց	»	111
Գվինէ	»	152
Թղթադրամով	»	121 20

ԱԶԳԱՅԻՆ

Ներկայ պարագայից մէջ ազգային վարչութեան և Ս. Պատրիարք Հօր բռնած ընթացքն համօրէն ազգին գոհութեանն ու համակրանաց արժանացած ըլլալով, այդ անկեղծ և անձնուիրական ընթացքը խծրծելը նոյն իսկ ազգին զգացումը վիրաւորել է, իսկ երբ այդ խծրծանքը մինչև իսկ վարչութիւնն և հետևաբար ազգը Բ. Դրան առջև կասկածելի երևցնելու գոյն կամ ձև առնու, այն ժամանակ ամեն Հայ իրաւունք կունենայ բողոքելու, և մեք՝ նրբև ազգային խմբագիր՝ կը պարտաւորինք արձագանգ և բերան ըլլալ այդ արդար բողոքանաց, 'ի բաց թողլով ամեն անձնական նկատում։

Ահա այս կարգէն է հետևեալ նամակին նիւթը։

. . . Խմբագիր էֆէնտի

Երբեմն Քաղ. Ժողովոյ անդամ Նուբեան էֆէնտի՝ այս անդամ լրագրական հրապարակին վրայ կերևի, և Միսմոի 7ԿԴ թուով նամակ մը կը հրատարակէ *, նամակ մը, որ հաւատարմութեանց խնդրոյն մէջ՝ վարչութեան ընթացքը կը դատի, և Քաղ. Ժողովոյ անդամակցութենէն իւր հրաժեշտին պատճառը կը մեկնէ, որպէս թէ արդէն իրողութիւնը բաւական բացայայտ մեկնած չըլլար զայն։

Այս նամակով Նուբեան էֆէնտի՝ երբև քաղաքագէտ և Ազգին շահուցը ճշմարիտ բարեկամ կը ներկայի, և ինչ որ արդէն իւր հրաժարագրին մէջ, զոր Ազգային Ժողովոյ դիւանին վրայ տուր, զնչեր էր գրել, և Ազգ. Վարչութիւնը արտաքին ճնշման մը և ազդակոծման դաւադրութեան մը իբրև գործի արատել, նոյնը կը համարձակի հրապարակի վրայ աշխարհի առջև կրկնել, և վարչութեան առած քայլը՝ ազգին քով հակասահմանադրական և Տէրութեան առջև անքաղաքագիտական դտնելով՝ աւելի հեռուն կը մղէ իւր ամբաստանութիւնը, և Օսմանեան կայսրութեան դէմ նիւթուած ընդհանուր և զարհուրելի դաւակցութեան մը խօսքը ընելէ ետև՝ քաղաքագէտ և ազգասէր էֆէնտին՝ լռելեայն ստուեր մը կը ձգէ Ազգ. Վարչութեան դիտաւորութեանց վրայ։ [illegible] տարմութիւնը առ Օսմ. կայսրութիւնն այնքան անյողդողդ, մեր Ազգ. Վարչութեան ընթացքը հաբրստահարութեանց խնդրոյն մէջ այնքան պայծառ բնական և զերծ է արատէ, որ քաղաքագէտ էֆէնտին՝ իւր անձնական նկատմանց հեռադիտակովը ս'րքան ալ խաւնակ տեսնէ զայն, չէ կարող պղտորել, և ապացուցանելով իւր բարոյական կուրութիւնը, քանի մը պատմական անուն մեզ 'ի յուշ կածէ, որոց օրինակին դժբաղդաբար հետևողներ չեն պակսիր մեր մէջ, և 'յանուն ազգասիրութեան՝ ազգին պատոյն և իրաւանց դէմ կ'ոգորին։

Եւ ինչ սճիր է գործեր Ազգ. Վարչութիւնը, որ հայ քաղաքագէտը այսքան կը տագնապի, իրար կանցնի և դրօշ կը պարզէ վարչութեան դէմ։—Ասիոյ գաւառներուն մէջ գործուած անօրէնութեանց համար խընդրագիր մը մատուցեր է Բ. Դրան, և դարմանը խնդրեր է։ Այս է ահաւասիկ իւր բովանդակ յանցանքը։ Հայոց ազգին խնդիրները այս սահմանէն անդին չեն անցնիր, և քաղաքականութեան հետ գործ չունին բնաւ։ Այս զգօն և ողջամիտ ժողովուրդը՝ որ չորս երկար դարերու իւր հպատակութեան մէջ՝ վայրկեան մ'անգամ՝ տէրութեան դէմ քաղաքական տագնապ չէ յարուցած, այլ սիրով և անձնուիրութեամբ ծառայած է միշտ, ոչինչ չպահանջեր որ տէրութեան արդի պարագայից մէջ անպատեհ և անքաղաքագիտական համարուի։ Ընկերութեան մը մէջ՝ երբ խումբ մ'անօրէն մարդեր՝ միաբանած, ինչպէս են Ասիոյ մէջ, իրենց նմաններուն կեանքը կը դաւեն, ինչքը կը կողոպտեն, պատիւը կոտնհարեն, յանուն քաղաքագիտութեան անհեթեթ է պահանջել անոնցմէ, որ տէրութեան ձանձրոյթ չպատճառելու համար՝ զոհուին անմունչ. և կեղեքողներուն դէմ՝ իշխանութեան գթութեանը ու արդարութեանը չապաստանին։

Ուրեմն Ազգ. վարչութիւնը դաւառական հարստահարութեանց դարմանը խնդրելով՝ բնաւ անքաղաքագիտական քայլ մ'առած չէ, մանաւանդ որ արդէն նոյն իսկ բարեխնամ տէրութիւնն ալ՝ զանազան պարագաներու մէջ՝ անկեղծութեամբ աշխարհի առջև այդ զեղծմանց գոյութիւնը հաստատելով՝ բարեկարգութեանց պէտքը հաչակած է, և և իբր այն՝ չդժգոհիր և չպահանջեր մեր ազգային վարչութենէն որ իւր յայտարարութեան հակառակ այդ զեղծումները ստէ և դաւառներու մէջ որջացեալ բռնաւորաց դէմ իւր արդարութիւնը չինդրէ։ Միայն Նուբեան էֆէնտին է որ տէրութեան լուսամիտ նախարարներէն աւելի քաղաքագէտ կարծելով զինքը, դիւանագիտօրէն վարչութեան դէմ կը սրդողի, և երբ իւր նամակին մէջ կայսրութեան դէմ նիւթուած դաւադրութեան մը ակնարկելով՝ Խառն ժողովոյ թագրիրը հրապարակաւ կը դատափետէ իբրև անքաղաքագիտական, ինքն անքաղաքագիտութեան մէջ կը թաւալի, և թերևս ակամայ վարչութիւնը կը զրպարտէ։

Հարստահարութեանց խնդիրն, ինչպէս ստուգեցի, Խառն ժողովոյ սեպտեմբեր 3 'ի նիստին մէջ յուղուած ատեն՝ Նուբեան էֆէնտի ներկայ՝ իւր անդամակցաց հետ համաձայնութեան ենթարկուեր է այս մասին Բ. Դրան խնդիր մատուցանելու հարկը, և խնդիրն իր վերջին որոշումը չգտած՝ լռելեայն մեկներ է խորհրդարանէն, մինչդեռ իւր նամակին մէջ կըսէ թէ բողոքած է՝ այս խնդիրն անժամանակ յարուցուելուն համար։ Ազգասէր էֆէնտին՝ եթէ ոակաւ ինչ անկեղծութիւն ունէր, պէտք էր որ նոյն օրը ժողովին մէջ՝ մնալով ցվերջ՝ իւր դիւանագիտական նուրբ տեսութիւնները պարզէր, ժողովը զգուշացնէր, եթէ զգուշանալու պարագայ մը գտնէր, և վերջապէս երբ չյաջողէր, արիւն ձեր 'ի գլուխ ձեր ըսելով՝ իւր բողոքը արձանագրելու տար, և լռին ու անշշունչ մեկնէր, առանց այս գայթակղութիւնը ծաւալելու։ Սակայն քաղաքագէտ էֆէնտին երբ այսպէս չշարժիր, և 'ի վերջէ հրապարակի վրայ կը համարձակի ըսել թէ իւր զգացումները ժողովականաց չէ կրցեր ներշնչել, բացարձակապէս կը սուտ։

Քաղաքագէտ էֆէնտին վարչութեան ընթացքը ազգին առջև հակասահմանադրական կը համարի, վասն զի իւր առ Բ. Դուռն մատուցած վերջին խնդրագրին մէջ օրէնսդրական խնդիրներ յարուցած է եղեր, և Ազգային Ժողովոյ արտօնութիւնը չէ առեր։

Օրէնսդրական խնդիր ըսելով՝ Նուբեան էֆէնտի՝ անչուշտ քրիստոնէից վկայութեան ընդունելութեան և կրօնափոխութեան մասին եղած առաջարկութիւնները կակնարկէ։

Սակայն Նուբեան էֆէնտի՝ իբրև նորընծայ ազգային պաշտօնաւոր մը՝ չգիտեր որ արդէն 1871ին հարստահարութեան խնդրոյն համար Ազգ. Ժողովոյ կողմէ կարգեալ խորհրդարանական յանձնաժողովին տեղեկա-

* Միսմոի այդ թիւը մեր ձեռքը հասած չըլլալով, տեսած չենք նամակը։
Ծան. խմբ.

դբրին մէջ, զոր Ազգ. Ժողովն ընդունեց, այս կրկին խնդիրներն ալ յողդուած և որոշուած են։

Բայց ասկէ, Ազգ. Ժողովը երբ վերջի անդամ ձեռք առաւ հարստահարութեանց խնդիրը, և վարչութենէն բացատրութիւն ուզելով՝ անոր թագրիրը տեսաւ, ոչ միայն անոր ընթացքը անքաղաքագիտական, ոչ միայն հակասահմանադրական չդըտաւ, այլ և յանձնաժողով մը կարդաց, անոր ձեռօք 71 թուականէն 'ի վեր գաւառներու մէջ կատարուած հարստահարութեանց տեղեկագիրը չինեց, որ բազում գէպքերով լի էր, և վարչութեան ցոյց տուած դարմաններուն վրայ ուրիշներ ալ յարելով իւր կողմէ, որոշեց որ այդ տեղեկագիրը Ազգ. վարչութեան կողմէ Բ. Դրան ներկայացուի։

Ազգ. Ժողովոյ այս տնօրէնութիւնը որ Նուրեան էֆէնտիի ամբաստանութեանց դէմ հերքում է ինքնին, 'ի հարկէ Նուրեան էֆէնտիի դիւանագիտական տեսութեամբը՝ վարչութեան տնօրէնութենէն աւելի ծանր կը կշռէր. այլ սակայն, զարմանալի բան. մինչդեռ Նուրեան էֆէնտի վարչութեան դէմ սրամտելով Բաղ. Ժողովոյ փչուտ ամբաստանը կը թողուր՝ վարդէ թիկնաթոռի վրայ բազմելու համար, Ազգ. Ժողովոյ նոյն նիստին մէջ՝ Բաղ. Ժողովոյ ընթացքը պարսաւելով համամտութիւն կը յայտնէր Ազգ. Ժողովոյ տնօրէնութեան, և կընդունէր որ այդ հարստահարութեանց տեղեկագիրը Բ. Դրան մատուցուի, և այս ընթացքով մեծ հակասութեան մը մէջ կիյնար։

Ուրեմն Նուրեան էֆէնտի երբ այսպէս առ խարխափ կը քալէ, կասպասուցանէ թէ Թալէրանի և Քավուրի աչակերտը չպիտի կրնայ ըլլալ, և տակաւին պէտք ունի քաղաքագիտութեան դաս առնելու Բաղ. Ժողովոյ անդամներէն, որոց Մենտորը կը հանդիսանայ ինք։

Բայց ամենէն աւելի ցաւալին և աններելին այն է որ՝ ազգասէր էֆէնտին՝ քննադատական ժամանակի մը մէջ՝ երբ Պասիբէթի պէս մոլեռանդ թերթ մը՝ Հայոց ազգին հաւատարմութեան վրայ մուր քսել կը փորձէ, և հետևեալ օրը յեռակոչում մը կը հրատարակէ, ինքը տնոր տեղ հրապարակ կիջնայ, և անխոհեմութեամբ վարչութեան ընթացքը դատափետելով՝ ազգին թշնամիներուն հացին իւղ կը քսէ, և յանուն ազգասիրութեան՝ ազգին չարիք կը հասցնէ։

Բարեբաղդաբար՝ այս տեսակ զրպարտութիւններ կը սահին կանցնին Հայոց ազգին վրայէն, առանց բիծ մը թողելու, և անպատուութեան կեղտը միայն բանտարկուներու ճակտին վրայ կը դրոշմեն։

Օսմանեան տէրութիւնը՝ այս ազգը ճանչնալու համար Նուրեան էֆէնտիի միջնորդութեանը և դիւանագիտութեանը չկարօտիր, և չորս հարիւր տարուան փորձով գիտէ այս ազգին անձնուիրութիւնը, զոր ընդվայր կը փորձեն խաղու մէջ դնել՝ պատիւ ու փայլ գտնելու համար։ Հայոց Ազգ. վարչութիւնը՝ բաց ճակատով և ոչ իրենց պէս ակնկոր և ամբիծապարտ՝ միշտ կը ներկայանայ բարեխնամ տէրութեան, իբրև իւր հօր, և քաղաքագէտներու պէտք չունի իւր աղերսալի ձայնը լսելի ընելու տալու համար։

Քաղաքական դիտում չունի, որ քաղաքագիտական ներութեանց և խաբէութեանց մէջ գալարի ու կծկի, և կը ժպտի արհամարհանօք այն սուտ ազգասէրներու և բանտարկութեանց առջև, որոց նպատակը աւելի երեսից օգուտն է, քան ազգինը։

1 Նոյեմ. 1876 ՍՄԲԱՏ
Կ. Պոլիս

Պաշտաս. Թաղ. խորհուրդը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ Թաղին Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն ուսնամութեան առթիւ Ամեն. Խրիմեան սրբազան վարդը Ս. Պատարագ. պիտի մատուցանէ հոն։

ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՆԱՄԱԿ Ի ԿԱԼԿԱԹԱՑԻ

(Շար. տե՛ս Բէ՛ 1900)

Յամէ արդէն հարցանելոյ 'ի Ջերմէ Հայրութենէ, թէ այսպէ՞ս են օրէնք եկեղեցւոյ, ի՞նչ էր արդեօք կատարումն ուխտի վստահացուցիչ սիրոյն ձերոյ 'ի մեզ, և թէ ա՞յս մաքրութիւն Աստուածացեալ ըղձի ձերոյ՝ իբրև մատակարար սրբութեան սրբոց, և ներածիչ խորհրդոյ Սրբոյ մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Դիցուք մեք անարժան. գէ8 ամեայ քահանայութիւն մեր յեկեղեցին խոտելի, զյարդ մեծարանաց վեհից վեհապունից 'ի մեզ՝ որպիսի են կայսերաշնորհ չքանչան. Հայրապետաշնորհ լանջակիր խաչ, եպիսկոպոսաուր կըրկնապարզև ծաղկեայ փիլոնք (կապոյտ և մանիշակեայն) աւագ երեցական սիրաղաք, սփռոցք (կարպետ), գաւազան, ձեռաց. գաւազան բեմբասացութեան և այլն. զլխովին ասեմք սուտ և կեղծական, ո՞ւր թողցուք ապա զալիս ծերութեան մերում, կամ իրաւունք ձերդ պատուասիրութեան զոնէ միւսմ 'ի սոցունց նկատել արժան էր. զի որպէս դուք էք պատիւ մեր, այնպէս և մեք եմք պարծանք ձեր. և յորժամ դուք զայս ամենայն առոն հարեալ յաշնչութեան տուայք, մեք ևս՝ թէպէտ եպիսկոպոսութեանյարդ ձեր ճանաչեմք քաջ, սակայն վսահ եմք ասել (զոր ասացեալ երբեմն՝ եկեղեցւոյնի ցձեզ) դուք չէիք և չէք արժանաւոր կոչմանդ, և թէ առ ի՞նչ բռնաբարեալ զայն՝ Աստուած միայն գիտէ. (կորուստ քո 'ի քէն է՝ Իսրայէլ), իրաւարանէ գիրք սուրբ։

Են և զտանին այժմէն եպիսկոպոսունք յեկեղեցիս, որք յեպիսկոպոսանալն կարծեն թէ ստորին եկեղեցականք ստրուկ և զերի են առ նոսա, զէն և պատրուակ ունելով զպատուէր Աւաքելոյն թէ «Ունկն դիք Աւագնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա» (Երր. Ժգ. 17). սակայն չունելով ներկայութիւն մատաց 'ի լուր միւսոյ պատուիրանին «Հա՛ղբ մի զայրացուցանէք զորդիս ձեր». (կողս. Գ. 21). թող և զայլ խրատս Աւաքելոյ առ առաջնորդս եկեղեցւոյ, թէ ո՛րպիսի զնոցս պարտին ունել, և ո՛ր հոգւով Աստուածայնոյ պարտին տնտեսել հօտին հաւատացեալոյ 'ի Տէր։

Զէր և չէ անարդանք ծերութեան մերում՝ 'ի տալն համբուրի աջոյն ձերոյ, ըստ որում օծեալ Տեառն, Եպիսկոպոս քահանայ լրութեան եկեղեցւոյ, ըստ հաւատոյ զլուխ մեր, իշխող և տէր. սակայն 'ի սմին ժամու հարկ և ձեզ տրամն պատկառ համբուրի ոչ 'ի տարկութիւն, այլ 'ի մեծարանս վարկին՝ թէ ո՛յր պատկեր համարէ ձեզ համբուրատուն. (չասեմք աստանօր եթէ անդրանիկն մեր իւցեր 'ի կայի, տարեօք աւագ քան զձեզ լինելոց էր, և թէ երբեմն՝ յորում հատարակութիւն կալկաթուս և Ջուղայ սարսէր մեզ յեպիսկոպոսութիւն, և մեր անրաւական զմեզ այնմ վսեմ կոչման՝ մեծաւ երկիւղածութեամբ 'ի բաց հրաժարեալ, որպէս թէ չիցեմք նմանող նմին՝ զորմէ խօսեցաւ Ս. Գիրք. (Բ. Թեսաղ. Բ. 4.) բայց թէ ձեր սրբութիւն յաւուրս յայսոսիկ չունիցի համարումն քահանայութեան զմէնջ, (որպէս ասացեալ էք տառապեալ պանդխտին Ցովհաննու քահանային Ղարաբաղցւոյ՝ թէ չճանաչեմ զքահանայութիւն քս, որով նա զրկեալ իսկ յեկեղեցւոյ՝ յաւուր ծանի Զատկի և այլն), ահա պարատտ են 'ի քննութիւն զհաւատս, հեղուն զեղուն կոնդակք, նամակք և վկայագրեր յորդանաւորաց քան զձեզ, որոց 'ի տեսանելն ձեր՝ թերևս սրտի մտաք սպաչաւեսջիք, թէ 'ի զուր զքնքուշ սիրտ մեր խոցոտեցիք. խոցոտեցիք արդարև՝ և չունիք պատամ ամենիչ խոցուածոցդ, և որպէս մեզ թուի մերով դալար զգացողութեամբ, ոչ զարմանք եթէ զմեզ 'ի մահ վարեսցէ. մի՛զբ ձեզ։

Ցուշ լիցին ձեզ բանք ձեր՝ յաւուր յորում անյիշաչարութեամբ եկաք համբուրել զաջ ձեր՝ և չնարհաւարել զոսն ծննդեան և մկրտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. «Ո՞ր հոգմ հակառակ վարեաց զքեզ առ մեզ»։ 'Ի պատասխանի ասացուք խոնարհութեամբ, «'Ի կոչմանց անտի մերոց՝ 'ի վաղ տարամերժեալ հոգմէն հակառակի, և տեղի կալեալ ատ 'ի կոզմն ձեր», ժպտեալ՝ չասացիք այլ ինչ։ Ահա ներգործութիւն ընդդէմ ներգործութեան, և բան հակառակ բանի, որ ստեաց զվստահացուցիչ դաշն սիրոյ ձերոյ 'ի մեզ, և թէ «սիրով սկսեալն՝ սիրով աւարտի» աւա՛ղ մերումն մոլեռանդ հաւատոյ մանաւանդ և պարզմտութեան, յորժամ բնութիւնն ետ մեզ իմանալ ըզ ներքինս մարդոյ, այլ արտաքնով միայն սահեալ 'ի մեծամեծ չարիս, ներեցէք մեզ, հայր, 'ի կրկնակի հարցս, թէ ո՞ր 'ի ներհակ շարժմանց մերոց կալաւ ձեզ զվարկածդ, որպէս չեմք իւիք թերացեալ նուիրական պարտեօք 'ի ձեզ, կարեմք և ամենայնի տալահովութեամբ հաստատել զոր ասեմքս, ձեր թէ 'ի Ջուղա անդր՝ և թէ յայսր իսկ չունիմք պակասեալ բարեկամական և որդիական յարդեանց 'ի ձեզ (եթէ ոչ առաւել նշանաւոր և սկանաւոր միջոցք քան զայլոցն 'ի ձեզ և ոչ նուազ քան զորոց կարծէքդ), ցոյցէք ապաշխեմք թէ զի՞նչ այլ պարտն էաք առնել ձեզ՝ և չարարաք, իբրև անգործունեայ քահանայ թեմի ձերոյ, որպէս ուխտեալ բարեկամ և անձնրնծայ որդի ձեր. զի եթէ ասիցէք երկիցս զկնի առաւօտեան ժամերգութեան հրաւիրեցիք զմեզ 'ի նախաճաշ՝ և չտուեալ ուշն ընդունելութեան, անդստին և անդր տուեալ ձեզ զաւթի հրաժեշտին, որպէս թէ ունելով խոստումն յայլ ուր դնալոյ. թողում և զոր զկնի ինքնին եկեալ և ընդ ձեզ նախաճաշեալ՝ յառաւել յարգանս ձեր, արտաքոյ սորին՝ չտեսանեմք յանցանս ինչ 'ի մեզ, և թէ կայ՝ յատկապէս խնդրեմք բանալ մեզ. իսկ եթէ ոչ, տպա ստոյգ գիտասջիք՝ զի անիրաւեալ էք մեզ, մանաւանդ և պատառեալ զքօղ խոնարհութեան մերոյ, չէաք մեք՝ զոր եղեալքս եմք բռնի խստութեամբ Հերով, զի եթէ անիրաւութիւնն երաց զերան անխօսին իշոյ, (Թու. ԻԲ. 28.) զիա՞րդ լուութիւն 'ի մեզ հապա։

Ի ներքոյ ցայս վայր յայտարարեալ բողոքոյ արհամարհանաց ձերոց 'ի ձեզ, զիտել Աստուած, թէպէտ անհնարեօք ցաւեցուցեալ 'ի հոգիս, մանաւանդ և ափսոսեալ սիրոյն 'ի ձեզ մատուցելոյ. սակայն և կերպիւ իւիք՝ տուեալ յոչնչութեան և ձերում առաւօտահասակ կենաց, վասն զի հոգին սնափառութեան, կեղծաւորութեան, անձնասիրութեան, չողբորթութեան և այլն, բացակայ են 'ի մէնջ, մանաւանդ և 'ի կուրծս զրեալ անիմք զրան Շնորհալւոյն Ներսէսի (Ընդհանրական, երես 190)։ Զի զիս եթէ ամենայն լեզուք գովեսցեն յայն բարի որ չէ առ իս՝ հոգմոց հնչմունք համարիմ, և եթէ պարսաւէ զք կամ դատէ յայն ինչ՝ որ 'ի մտաց խղճէ ո՛չ դատիմ, ոչ փոյթ ինչ առնեմ։ Ի սմին սակի բերիմք և 'ի թշնամանս եկեղեցպանի ընդ մեզ, ոչ այլապէս պատճառաւ՝ քան հրապարակաւ ընդդէմ ելանելոյ հրատարակեալ վիմապիսի գրոյն՝ որ հակառակ պատուոյ և արտաքնութեան վեհափառ կաթուղիկոսին մերոյ արդի, կամ ոչ ըստ ոմանց երկրպագու ապօրէն գործոցն, չիմանալով բընաւ թէ ժամանակն ունէր բերել զձեր եպիսկոպոսութիւն խնկարկութեամբ երկրպագու կամացն և գրոշմիչ ապօրէն գործոց Նորուն։

Եթէ եկեղեցպան կամ այլք հնապուրեցին զսէր ձեր առ մեզ, և ծանուցին զյանցանս ծանուն 'ի մեր կողմէ, մինչ անդամ զձեր կամ այլոց յարակցութիւնն ընդ մեզ անպատեհ կամ պատժական, ընդէ՞ր դուք որպէս եպիսկոպոս չարկանէք 'ի քննողութեան, հի՞մ ոչ դատէք զմեզ, և եթէ յանցաւոր՝ պատժէք, ուղղէք և կատարէք զպարտս ձերդ պաշտման. այլ եթէ վերահաս բաղբաղայից դառն նախանձու թշնամանաց անդրարամաց 'ի մեզ, է՞ր ուրեմն փոյթ չտանիք խրատել զնոսա և վարել յուղղութիւն, այլ ընդհակառակն յերկիւղէ կամ յինչ՝ չգիտեմ՝ կամակիր և կամարար գոլով նոցին խրախուսէք քաջալերիք յետ քան զևս վատթարութիւն, որպէս արդեամբ յայտնեցիք յեկեղեցւոջ յանարգութիւն մեր և 'ի խնդութիւն որոց ընդ ձեզ համախոհ, այն է պահերն ձեր զմեզ անչուրջառ և որիշ 'ի խմբել դատակարգ քահանայից 'ի ջրօհնեաց հանդիսի. զմէ՞ այսպէս, ո՞չ ասպաքէն պատկեր եմք ձերում աքեմի, ո՞չ ասպաքէն պատիւ և առնարգանք մեր՝ իւրաք 'ի ձեզ ակնարկին, բայց եթէ ասիցէք՝ նա եթէ զտէրս և ըզվարդապետս ձեր չկնայէ յանդգնելոյ, զի՞ այլ ձեզ տեղի բողոքոյ զնմանէ և այլն, յայնժամ դառնամք կրկնել զառակն թէ «Զուկն 'ի գլխոյ ասի հոտեալ» նաև ոչ սակաւ զարմանալ թէ նա՝ այսինքն եկեղեցպան՝ 'ի տեսանելն զմեզ՝ ողջունէ՝ 'ի գլխոյն առնլով զգլխարկ իւր, և գիպոյ յեկեղեցւոջ, 'ի սուրբ պատարագի, 'ի ժամս ողջունի հանրութիւն և զձեռն մեր, բայց և այնպէս 'ի թիկանց չոլակոսի 'ի վատաբանութեանց ընդդէմ մեր։

Արիացաւ սա՝ եկեղեցպան յորժամ գրգռեալ 'ի տէր Մարտիրոս տէր Յովակիմ, զանգդոյզ Աբրահամ վարդապետն մերժեալ վարեաց յաղքատանոց քաղաքիս, և չետես գիմաղիր աք։ Զօրացաւ յորժամ կամակից զձեզ ինքեան գտեալ, թարց քննադատութեան և դատաստանի ետ ձեզ ընկենուլ զտէր Եղիշէ 'ի գրագրութենէ վանացդ, վստահացաւ առաւելապէս յորժամ փոխանակ կատարելոյ զպատուէր ձեր և ընդունելոյ զտէր Ս. Յարդանան 'ի թեմ տեղւոյս, արհամարեալ առաքեաց յաղքատանոց քաղաքիս, և այս անրաւական (իբրև դեր եպիսկոպոս) արդիլեաց զնա չգնալ յեկեղեցին՝ չտալ զպաշտօն քահանայութեան, և ընդդէմ այսր զթեմանթող քահանայն Բուռայու ընկալեալ 'ի բեմ տեղւոյս, և ըզթեմական ստատ առաքել անդ յաջորդութիւն, զորս տեսեալ ձեր աչօք անտարբեր եղէք, որով և քան զևս յայնեցէք ընդարձակեցիք զարշաւանս նորուն ապօրէն գնայից յեկեղեցիս, ահա այս է և այս որ զվեհ արտօնութիւն ձեր նկուանայոյ, և զվիճակ եկեղեցւոյն ընդ պաշտօնէից արկ 'ի դժուարինս և ի տառապանս սերկեան տեսարանի։

Ո՞չ կարծէք, հայր, թէ նոյն եկեղեցպան յաւանձին կարծիս իւր զի՞նչ համարումն 'ի մէնջ առընկալեալ, և թէ քանի՞ցս հեգնօրէն ծաղրեալ զմեզ, և թէ ինչ ինչ անարժան բանս խօսեցեալ 'ի թիկունս ձեր, նա՝ զի այլ առաւելութիւն բանից, քան զոր միջոցաւ խաչվերաց՝ առնելոյն ձերոյ 'ի սուրբ Խաչ կիւրակէին, 'ի ներքոյ սրահի բնակութեան ձերոյ՝ պոռոտայր ծանրալուր բանիւք ի ձեր իսկ լսելիքս, և դուք 'ի վերուստ չիմանալոյն տայիք. թողումք և զոր յայլում նուագի ընդ ձեզ խօսեցեալ անպատեհս և ձեր չիմանալ ձեռաց յուս նորին, արի՛, արի՛ Թովմա, մի՛ բարկանար. արի մէկ շուրուր տամ խմիր, ասայն. վա՛յ, վա՛յ, վա՛յ մերում տառապանաց և ողորմելութեան, այլ ինչ մնացեալ յեկեղեցիս՝ ոչ ինչ։

Հեգնեալ Բոռով

ԻԼԱՆ

Նիզամիյէ երգաք անպարբնա լուզումի օրան 30,000 քըյէ Բուլգէրի զէյթին միւնաքասաոլ Թըշրինի սանիի Բումինին ալթընճը ճիւմա էրթէսի կիւնիւ լճրա օրունաճաղընտան, իթա իթմէյէ թարիպ օրանլարընա եէվմի մէգիւրատէ Տարը Շուրայէ ասքէրիյէ կէլմէրերի։

3 Թըշրինի եվվել 1876 1

Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ԳԱՄԱԳԻՐՔ

ԱՊԴԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա. Ա. Մ-ԷՆ

Բ. Տպագրութիւն

Ազգային վարժարանաց նախնական կարգերուն համար շինուած այն գամագիրքին առաջին տպագրութիւնը շատոնց սպառած ըլլալով այս անգամ երկրորդը հրատարակուեցաւ մասնաւոր քննութեամբ և սրբագրութեամբ։

Շատ դնողներու համար օրինաւոր վեղչ կ'ըլլայ։

Կը ծախուի ԵԷՆի—Ճամի Զիլինկիրլեր ճատաէսի թիւ 8՝ Ս. Դ. և Եաղմաճեան դրատունը, և ուրիշ դրավաճառաց քով։ Գին 65 սանդիմ։

Է. ԼԱՊՈՒԼԷՑ

ԲԱՐԻՁ ՑԱՄԵՐԻԿԱ

Եւրոպայի ամեն լեզուներու թարգմանուած, և միլիոններով սպառած այն հրահանգիչ և միանգամայն հետաքրքրաշարժ վէպին հայերէն թարգմանութեան երկրորդ՝ այն է վերջին հատորը Պոլիս հասած ըլլալով կը ծախուի ԵԷՆի–Ճամի Զիլինկիրլեր ճատէսի թիւ 8՝ Ս. Դ. և Եաղմաճեան դրատունը։ Գին 2 ֆրանք։

ՈՒՐՈՒԱԳԻԾ

ՈԳԻՈՑ ԵՒ ԸՆԹԱՑԻՑ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՆԵՏԿՈՅ

Գեր. Այվազեան Գաբրիել Արք եպիսկոպոսի գրչէն ելած և 1857 ին հրատարակուած այս հետաքրքրաշարժ գործին առաջին տպագրութիւնն ըսպառած ըլլալով երկրորդ անգամ տպագրեցաւ։

Կը գտնուի ամեն հայ գրավաճառաց քով գին 3 ղրշ։

Մինասեանին Մաղաղան գտնուած ու

ՓԱՆԱՍԷ

կոչուած ցաւի դեղը բոլորովին խոտերէններէ բաղադրուած ըլլալով թէ ներսէն և թէ դուրսէն կը գործածուի ու քաղմաթիւ ցաւեր ու հիւանդութիւններ շուտով կը բժշկէ, ինչպէս որ վարը յիշուած է.

Ամէն տեսակ բովի, Ստամոքսի. Մէջքի կամ Ազիքներու ցաւեր. ու նաև թանչք, քօլերա և այլ ամառուան հիւանդութիւններ ունեցողները աս դեղէն խմելու են հետեւեալ կերպով, կէս գաւաթ ջուրի մէջ դիր ապուրի գրդալէն աւելի շաքար, վրան լեցուր անուշի գրդալ մը փանասէ, աղէկ մը խառնէ ու խմէ։ Կոկորդի հիւանդութեանց և Ուռեցքի համար դեղը վերոյիշեալ կերպով պատրաստէ ու ժամը կամ երկու ժամը հեղ մը մէկ կամ երկու անուշի դգալ այն բաղադրութենէն խմէ։

Ցօդացաւի (Ռիւմաթիզմ), Ոտքի ցաւի, Ստամոքսի ու տեսակ տեսակ կռնակի ցաւերու համար դուրսէն փանասէ քսելով աղէկ մը շփելու է։ Ականջի ցաւի համար քիչ մը բամպակ փանասէի մէջ թաթխելով ցաւած ականջին վրայ դնելու է։

Ամէն ատեն երբոր ցաւի մը համար դուրսէն փանասէ քսել հարկ ըլլայ, եթէ քիչիկ մ'ալ խմուի՝ աւելի շուտ բժշկութիւն կը ըլլայ։

Մարմնոյն այրուած կամ ճմլուած տեղերը բժշկելու համար վատնգը պատահածին պէս փանասէէն վրան աղէկ մը լեցուններու է։ Դանակով ևայլն կտրուած վերքերը բժշկելու համար արիւնը չի սրբած շուտով մը վերքը կապելու և կապին վրայէն փանասէ լեցուններու է մինչև որ լաւ մը թրջի։ Փանասէն նաև արեան շրջանը կարագացրնէ ու բոլոր բնութիւնը կը զօրացունէ։

Այս դեղին օգտակարութեանը վրայ երկարօրէն գրել աւելորդ կը համարինք. գործածողները զ'այն միշտ կը գովեն. ուզողը կրնայ անձամբ փորձել, գինն ոչ է։

Կը ծախուի ՄԻՆԱՍԵԱՆ և ԸՆԿԵՐՈՅՑ Ամերիկեան վաճառատունը որ'ի Ղալաթիա Կոստանդնուպօլսոյ։

Շինողն է

CURTIS ET BROWN
NEW YORK



ՇԻՐՔԷՏԻ ԽԱՅՐԻԷ

ՇՈԳԵՆԱՒԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1876 ՆՈՅԵՄԲԵՐ 1 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՆՈՅԵՄԲԵՐ 30

Ժամ	Թվ.		Ս-ԲՈՊԱԿԱՆ ԵՂԷՐ
2	15	34	ԵԷՆիմահալլէէն Մէզարպ· Պէօյիւքաէրէ, Թարապիա Եէնիքէօյ Սթէնեա, Պոյաճ. Ր. Հիսար· Պէպէք·
3	15	19	ԵԷՆիմահ. Մէզար· Պէօյիւք· Թարապ· Եէնիք Էմիրկէն, Ր· Հիսար, Պէպէք· Արնավ·
3	45	32	Ր· եւ Ա· Գավաքէն Մէզար· Պէօյիւքա· Թարապիա, Եէնիքէօյ· Սթէնեա, Էմիրկէն, Ր Հիսար, Պէպէք Արնավ· Օրթաք· Պէշիկթաշ·
5	30	34	Մէզար· Պէօյիւք· Թարապիա, Եէնիք· Էմիրկէն· Պոյաճ, Ր Հիսար, Պէպէք· Արնավ· Դուրուչ· Օրթաք· Պէշիք·
7		2	ԵԷՆիմահալլէէն Պէօյիւքա· Թարապ· Եէնիք· Պէյքօզ, Բաշապ· Գանլըճա, Պոյաճ· Ր· Ա· Հիսար Գանթիլլի Արնավուտք Պէյլերպէյ, Օրթաքէօյ, Գուզկունճուք, Պէշիքթաշ, Իսկիւտար·
8	15	19	Ր· եւ Ա· Գավաքէն ԵԷՆիմահալլէէն Պէօյիւքաէրէ· Թարապ· Պէյքօզ· Եէնիք· Պոյաճ· Ր· Հիսար· Պէպէք· Արնավ· Օրթ· Պէշիկթաշ·
10		22	Մէզարպ· Պէօյիւք· Թարա, Եէնիք· Էմիրկ· Ր· Հիսար, Արնավ, Դուրուչ· Օրթաք· Պէշիկթաշ·

Արնավուտ ԷԵՂԷՆ

2	15	1	Արնավ· Դուր· Օրթաքէօյ, Պէշիքթաշ· (Նոյեմբեր 16էն ժամ 2 1/2ին·
2	45	6	Արնավ· Գուրուչ· Օրթաքէօյ· Պէշիկթաշ· (Նոյեմբեր 16էն ժամ 3ին)·
3	15	22	Պէպէք· Արնավ· Դուր Օրթ· Պէշիկ· Գապաթաշ· (Նոյեմբեր 16էն ժամ 3 1/2ին)·
4		3	Արնավ· Գուրուչ· Օրթաքէօյ· Պէշիքթաշ· Գապաթաշ· (Նոյեմբեր 16էն ժամ 4 1/4 ին)·
4	35	21	Արն· Գուր· Օրթաք· Պէշիկթաշ· Գապաթաշ· (Նոյեմբեր 16էն ժամ 4 3/4ին)·
5	45	1	Արնավ· Գուր· Պէյլէր· Օրթաք· Գուզկ· Պէշիկթաշ· Գապաթաշ·
8		3	Պէպէք· Վանիք· Արնավ· Զէնկ· Պէյ· Օրթաք· Գուզկ· Պէշիքթաշ·
10	20	5	Արնավուտքէօյէն ուղղակի կամուրջ·

Ասիական Եղեր·

2	15	21	Պէյքօզ, Բաշ, Գանլըճա, Ա· Հիսար, Գանա· Վանիքէօյ· Զէնկէյք, Պէյլէր, Գուզկունճ· (Նոյեմբեր 16էն ժամ 2 1/2ին)·
2	15	2	Վանիքէօյէն Զէնկէյք, Պէյլէրպ· Գուզկ· Գապաթաշ· (Նոյեմբեր 16էն 2 1/2ին)·
4		33	Պէօյիւքա Պէյքօզ· Բաշապ· Գան· Ա· Հիսար· Գանա· Վանիք· Զէնկ· Պէյլէրպէյ· Գուզկ·
4	15	6	Վանիք· Զէնկէյքէօյ· Պէյլէրպ· Գուզկունճուք· Բացի ուրբաթէ·
10	40	3	Վանիք· Զէնկէյք Պէյլ· Գուզկ

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈՓԵՆԱՒԵՐԸ

Ս-ԲՈՊԱԿԱՆ ԵՂԵՐ·

3	15	2	Գապաթաշ, Իսկիւտար·Պէշիքթաշ, Գուզկունճուք Օրթաքէօյ Պէյլերպէյ Զէնկ· Ա·ռնավ· Գանթիլի Ա· Հիսար, Ր· Հիսար, Պոյաճ· Գանլըճա, Բաշապ· Պէյքօզ ԵԷՆիք· Թարապիա, Պէօյիւքա· ԵԷՆիմահ·
4		31	Պէշիկթաշ, Օրթաք·Արնավ· Պէպէք· Ր·Հիսար, Էմիրկ· ԵԷՆիք· Թարապ· Պէօյիւքա· Մէզարպ·
5	30	19	Պէշիկթաշ, Օրթաք· Արնավ· Պէպէք· Ր· Հիսար, Էմիրկ· ԵԷՆիք· Պէյքօզ, Թար, Պէօյիւք· ԵԷՆիմահ· Ր· եւ Ա Գավաք·
6	30	3	Իսկիւտար, Պէշիկթաշ Գուզկունճուք· Օրթաք· Պէյլէր· Զէնկ· Արնավ· Պէպէք·
8	15	22	Պէշիքթաշ Օրթաքէօյ Արնավուտքէօյ Ր· Հիսար, Էմիրկէն, ԵԷՆիք· Թարապիա, Պէօյիւք· Մէզար·
10		32	Պէպէք, Ր·Հիսար, Էմիրկէն, Սթէն· ԵԷՆիք· Թարապ· Պէօյիւք Մէզարպ· Ր· եւ Ա· Գավաք·
10	45	34	Պէշիկթաշ, Օրթաք· Արնավ· Պէպէք· Ր· Հիսար Էմիրկէն· Սթէն· ԵԷՆիք· Թարապ Պէօյիւքա· Մէզարպուրնու, ԵԷՆիմահ·
11	15	19	Պէպէք Ր· Հիսար, Պոյաճ· ԵԷՆիքէօյ· Թարապ· Պէօյիւքա· Մէզարպ· ԵԷՆիմահ·

Արնավուտ Եղեր·

4		21	Գուրուչ· Արնավուտքէօյ·
9	30	6	Գապաթաշ·Պէշիկ· Օրթաք· Գուրուչ· Արնավ·
10	25	2	Պէշիկթաշ, Օրթաքէօյ Գուրուչ· Արնավ·
11	5	6	Գապաթաշ· Պէշիկթաշ, Օրթաքէօյ, Գուրուչ· Արնավ·
11	35	3	Պէշիքթաշ· Օրթաքէօյ, Գուրուչ· Արնավուտքէօյ·
12		1	Պէշիք, Օրթաքէօյ, Դուրուչէչմէ, Արնավուտքէօյ·

Ասիական Եղեր·

3	45	6	Ուղղակի Վանիքէօյ (Բացի ուրբաթէ)
4	45	1	Պէշիկթաշ·Գուզկ· Պէյլէր· Զէնկէյ· Արնավուտքէօյ·
9	45	3	Գուզկ· Պէյլէրպէյ· Զէնկ· Վանիք·
10	30	33	Գուզկ· Պէյլէր· Զէնկ· Վանիք· Գանա· Ա· Հիսար· Գանլըճա, Բաշապ· Պէյքօզ· Պէօյիւք·
11	15	21	Գուզկ· Պէյլէրպէյի· Զէնկէյք· Վանիք· Ա· Հիսար· Գանլըճա, Բաշապահճէ, Պէյքօզ·
11	40	22	Գապաթ· Գուզկ· Պէյլէրպ· Զէնկէյ· Վանի Արնավ·

Ուրբաթ օրերը ժամ 4 1/2ին կամուրջէն չոգենաւ մը ելնելով Գուզկունճուք· Պէյլէրպէյ· Զէնկէյ· Վանիք· Գանա· Ա· Հիսար, Գանլըճա, Բաշապահճէ հանդիպելով Պէյքօզ պիտի երթայ, եւ իրիկուան ժամ 9ին Պէյքօզէն պիտի ելնէ եւ յիշեալ նաւամատոյցները հանդիպելով կամուրջ պիտի վերադառնայ։

Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երկշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը։ Բաժանորդագրութեան տեղերն են Ղալաթիա Անտարքճըլար ճատէսի թիւ 198, Ղօրօ խան Մասիսի խմբագրատունը։

Իսկ գաւառաց մէջ հետեւեալ հեղինակաւորաց սենեակները։

ԻԶՄԻՐ· Յակոփան աղա Տէմէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ· Խոսրով էֆ· Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ· Սահակ աղա Թանկէրեան.
ԹԷՌԻՊՏԱՂ· Յովակիմ աղա Ուզունարդեան·
ՏՐԱՊԻԶՈՆ· Խաչատուր աղա Էրմասեան
ԿԱՐԻՆ· Կարապետ աղա Ջաքարեան.
ՎԱՆ· Կարապետ աղա Նոթանեան·
ՄՈՒՇ· Մկրտիչ աղա Փոթիկեան
ԵԱԾ· Մ· աղա Խաչիկեան.
ՖՈՌԾԱՆ Ֆէրհատ աղա Ս Ֆէրհատեան
ԵՐԶՆԿԱՑ· Թադէոս աղա Բազրատունի·
ՍԻՎՐԻՀԻՍԱՐ· Արմ· Ց· Ռուբէն·

Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ուզողներն աս տեղերէն մէկուն հետ կրնան Ադմ ակցիր։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՒ
ՂԱԼԱԹԻԱ ՆՕՐՕ ԽԱՆ

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANC COMPANY

ՆՕՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԵՒ ՄԷՐՔԷՆԹԱՅԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ա.Ա.Ք.

Բաժանորդագրեալ դրամագլուխ 2,000000
Վճարեալ դրամագլուխ 250,000
Պահեստի դրամ հրդեհի ճիւղէն գոյացեալ 827,238—1,077238
1872ին հրդեհի զուտ հասոյթը 803,746

NORTHERN ASSURANCE COMPANY

ՆՕՐԹՀԸՐՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ա.Ա.Ք.

Բաժանորդագրեալ դրամագլուխ 3,000000
Վճարեալ դրամագլուխ 150,000
Պահեստի դրամ հրդեհի ճիւղէն գոյացեալ 315,000—465,000
Զուտ հասոյթ 1872ի 313,364

Ստորագրեալք իրենց բազմաթիւ յաճախորդաց և այս քաղաքիս ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենք վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրութեան մը մէջ կը գտնուին, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանեն։

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց չ՝ ջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովը՝ Ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագումար ապահովութիւն բռնողներու ինքզինքը ներկայացուցանել։

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնք կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Ղալաթիոյ և Պօյոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները գիւղերը և գաւառները։

Գիներուն և աւելի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել Միացեալ ընկերութեանցս գրասենեակը Ղալաթիոյ Բէրշէմպէ բազարի մօտ Կաւանի խան թիւ 3։

Լիազօր գործակատար
Վ. Ռ. ՍՄԻԹ